ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«24» 01 2024 թ.
№ ԴՍԵՊ-44/-45

«Վիքթորի 1» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08233161)
տնօրեն՝ Թ. Տեր-Հովհաննիսյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լեռ Կամսար 9
էլ. հասցե՝ a-hakobyan@mail.ru
հեռ. 044-77-13-17

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՎԻՔԹՈՐԻ 1» ՍՊԸ-ի միջև 11.08.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-1/7-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՎԻՔԹՈՐԻ 1» ՍՊԸ-ն 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր ընդհանուր 75 հատ ապահովիչների արկղեր, որոնք չեն մատակարարվել (ընդհանրապես չեն մատակարարվել):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունվարի 24-ին, միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՎԻՔԹՈՐԻ 1» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 5 115 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 26.12.2023թ. դրությամբ և 825 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

(կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 22 500 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 33 750 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 02.02.2024թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ՎԻՔԹՈՐԻ 1» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 02.02.2024թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ